

Ս. ՂԱԶԱՐՅԱՆ  
Ֆիլ. գիտ. քեզնտժու

## ՀԱՅՈՅ ԼԵԶՎԻ ԲԱՂԿԱՅՈՒՅԻՉ ՄԱՍԵՐԸ

Հայոց լեզվի ուսումնասիրությամբ զբաղվել են եվրոպական մի շարք գիտնականներ: Նրանք ավելի քան երկու հարյուր տարի գրել ու վիճել են հայերենի մասին, սակայն նրանցից և ոչ մեկը չի կարողացել վերջնականապես լուծել մեր լեզվի կազմավորման հարցը: Եվրոպական գիտնականների՝ հնդեվրոպաբանների ուսումնասիրությունների վերջին խոսքը հանգեց նրան, որ հայերենը բռնադրոսիկ ձևով մտցվեց հնդեվրոպական լեզվաընտանիքի մեջ և կնքվեց որպես հնդեվրոպական լեզու:

Հնդեվրոպական լեզվաբանները հայոց լեզուն ուսումնասիրելիս նկատի չեն ունեցել նրա միջավայրը, հարևան լեզուները, Հայկական բարձրավանդակում ապրած հնագույն ժողովուրդների լեզուներն ու կուլտուրական մշակույթները:

Նրանք, սակայն, մանրազնիւն ուսումնասիրել են մեր լեզվի հնչյունաբանությունն ու ձևաբանությունը և նրանց մեջ դիտել այնպիսի ընդհանրություններ, որոնք կապվում են հնդեվրոպական լեզուների հետ: Բայց մոռացության են տվել մեր լեզուն հնդեվրոպական լեզուներից սահմանազատող օրինաչափությունները:

### 1.

Հայտնի է, որ յուրաքանչյուր ժողովուրդ ունի պատմականորեն ձևավորված արտասանական որոշ ունակութվոններ, որոնք սովորաբար ժողովրդի զարգացման այս կամ այն շրջանում այդ ժողո-

վրդի լեզվին հատուկ են: Արտասանական այդ ունակութիւնները բնատուր շինելով հանդերձ՝ լեզվական այն գլխավոր գործոններից են, որոնք պատմական որոշ շրջանում բնորոշում են տվյալ ժողովրդի արտասանութեան ինքնուրույնութիւնը և խթանում նրա լեզվի հնչունական կողմի ձևավորմանը: Բայց այդ երևույթը չի կարող հարատև ու անփոփոխ մնալ: Դարերի ընթացքում փոխվում են ժողովուրդների արտիկուլացիոն ունակութիւնները: Մինչդեռ հնդեվրոպական լեզվաբանների համար հնչունական օրինաչափութիւնները անփոփոխ են միևնույն ընտանիքի բոլոր լեզուների համար: Այդ դոգմաներից ելնելով՝ նրանք մոռացութեան են տվել հայերենի հնչունական այն իրողութիւնները, որոնք նրանց նկատած օրինաչափութիւններին անհամապատասխան են: Հայոց լեզվի հնչունական այդ առանձնահատկութիւններն են հենց, որ նրան անհամեմատելիորեն մոտեցնում են Հայկական բարձրավանդակում ապրած և պատմական ասպարեզից դուրս եկած ժողովուրդների և ժամանակակից կովկասյան ժողովուրդները, առանձնապես ճաների, վրացիների լեզուներին: Այդ առանձնահատկութիւնները մեծ չափով կապված են նաև ուրարտերենի հետ: Ինչպես ուրարտերենը, այնպես էլ հայերենը ունեցել են երեք անդամից բաղկացած բաղաձայնների հնչյակ խումբ (բ, պ, փ, դ, տ, թ, ձ, ծ, ց, չ, և այլն):

Հայերենը երկար ձայնավոր հնչուններ չունի: Նա բոլոր այն դեպքերում, երբ Բ-ով կամ Ռ-ով փոխառութիւններ է կնքում, այդ հնչուններից առաջ որևէ ձայնավոր հնչուն է ավելացնում: Այդ երևույթը ընդհանուր է նաև ուրարտերենին և Հայկական բարձրավանդակում ապրած այլ ժողովուրդների լեզուներին:

Ակադ. Մառը նշել է, որ հաբեթական լեզուները հարուստ են աֆրիկատ հնչուններով: Հայերենը նույնպես հարուստ է աֆրիկատ հնչուններով: Հայոց լեզուն, առանձնապես ժողովրդական բարբառները, իրենց հնչունական մի առանձնահատկութեամբ իստարբերվում են հնդեվրոպական լեզուներից. այդ է հնչունն ին արտասանութիւնն է: Այդ երևույթը մենք տեսնում ենք նաև ուրարտերենում, խեթերենում, և հայերից առաջ Հայկական բարձրավանդակում ապրած այլ բնիկ ժողովուրդների լեզուներում:

Պրոֆ. դոկտոր Գ. Վափանցյանը իր Chetto - Armeniaca ուշագրավ աշխատութեան մեջ նշում է խեթերենին հատուկ հնչունական մի շարք փոփոխութիւններ, որոնք մենք տեսնում ենք նաև հայերենում. խեթական ձայնեղ Բ, Դ, Գ հնչունները,

երբ նախորդում են Ե կամ Ի ձայնավորներին, դառնում են խուլ Պ, Տ, Կ հնչյուններ. օրինակ՝ ispada, բայց՝ ispanți (սեռ. հուլ.), dai, բայց tianzi և այլն. հայերենում անդ, բայց՝ անտի և այլն. ենթերենում շատ հաճախված են Դ հնչյունի Զ-ի վերածվելու դեպքերը. ինչպես՝ ispard- || isparz «հոսել», ad-(ed) || az (ez) «ուտել» և այլն: Հայերենում նույնպես կան հնչյունների այդպիսի հաջորդումներ. օրինակ՝ յորդ-յորձանք, փոխինդ-փոխինձ, խեղդեմ-հեղձնում և այլն: Հնչյունական այս առանձնահատկությունները նկատվում են նաև հաբեթական սիփտեմի լեզուների մեջ: Դրանք հաստատում են Մառի այն կարծիքը, ըստ որի հայոց և՛ դրավոր և՛ բանավոր լեզուներում բնիկ և հաբեթական շերտը հանդես է գալիս ավելի վառ ձևով, ավելի կենդանի, քան հնդեվրոպականը, որն իր տեսակարար կշռով նվազ տեղ է բռնում հայերենի հնչյունաբանության մեջ, եթե նկատի չունենանք այն նմանությունները, որոնք ընդհանրապես ընդհանուր են բոլոր լեզուներին:

## 2.

Հայերենը բարդ կազմություն ունեցող լեզու է: Հայերենի մեջ երբեմն այնքան ուժեղ են խաչավորվել լեզվական տարբեր իրողություններ, որ դժվար է նշել, թե ո՞ր տարրն է սկզբնականը, և ո՞րը հետո առաջացած: Առերևույթ թվում է, թե գրաբարում լեզվական ավելի հին ձևեր պետք է պահպանված լինեին, բայց ոչ բոլոր դեպքերումն է այդպես: Դրաբարում, օրինակի համար, գոյականների հոգնակիների կազմության մեջ մենք բնիկ տարրերի հետ, որոնք գերակշռող են, տեսնում ենք նաև հնդեվրոպական տարրեր, մինչդեռ աշխարհաբարի հոգնակիները ամբողջությամբ բնիկ են: Աշխարհաբարի ներ և եր հոգնակի մասնիկները տեղական ծագում ունեն: Ներ հոգնակի մասնիկը կազմված է նի և եր հոգնակիներից, իսկ որ նի և եր մասնիկները կապվում են բնիկ ժողովուրդների լեզուների հետ, երևում է նրանից, որ նման հոգնակիներ կան նաև կովկասյան ժողովուրդների լեզուներում. նի հոգնակին ունեն վրացիները, իմերները, ինգուշները, խեվսուրները և ուրիշ հաբեթական ժողովուրդներ: Ար, եար, եր հոգնակի մասնիկներ ունեն Դաղստանի ժողովուրդները. լեզգիների լեզվում, օրինակի համար՝ ար, եար, հոգնակիները շատ սովորական են. օրինակ՝ hajvan-ar «ձիեր», čuv-ar «եղրայրներ», či-jə

«քույրեր» և այլն: Հայերենի և կովկասյան ժողովուրդների լեզու-  
ների ոչ միայն հոգնակի մասնիկների, այլև հոգնակիներ կազմե-  
լու ձևի մեջ նմանություններ կան:

Հայերենում հոգնակի մասնիկը թեք հոլովներում հոլովա-  
կազմիչց առաջ է դրվում. օրինակ՝ բաժակ-բաժակներ-ի, այդ  
երևույթը նկատվում է նաև վրացերենում և կովկասյան այլ լե-  
զուներում. օրինակ՝ kâc-isa «կեցի»,<sup>1</sup> kâc-eb-isa «ամաց-ներ-ի»  
և այլն:

Գրաբարում ներ և եր հոգնակի մասնիկների փոխարեն ու-  
նենք Ք, Յ, Ս և որոշ բառերի համար նաև՝ անի, նի, տի, վի, ետ  
մասնիկներ, որոնցից հնդեվրոպական է համարվում Ս հոգնակի  
մասնիկը, իսկ մնացածները բացատրվում են միայն բնիկ ժողո-  
վուրդների լեզուներով: Հոգնակիների այդ բաղմաղանությունը  
ցույց է տալիս նախ՝ որ հայոց լեզուն կազմավորվել է մի շարք  
լեզուների լեզվական տարրերից, երկրորդ՝ որ այդ լեզվական  
տարրերի մեջ գերիշխողը և հիմնականը եղել է բնիկ շերտը, որը  
գրաբարում ավելի է ձևափոխման ենթարկվել ու որոշ դեպքերում  
փոխարինվել է հայոց լեզվի մեջ մտած և մասնակի կիրառությու-  
ն ստացած, բայց հնդեվրոպական լեզուներում լայն գործածությու-  
ն ունեցող հոգնակի մասնիկով (Ս-ով), որի կիրառման ու տարած-  
ման համար բնիկ լեզուներում որոշ հիմք է եղել:

Հայերենում Ք հոգնակի մասնիկը շատ տարածված է. դրա-  
նով կազմվում են գոյական անունների ուղղական և գործիական  
հոլովների հոգնակիները, բայերի սահմանական հղանակի-  
ներկա, անցյալ անկատար, անցյալ կատարյալ, ապառնի ժամա-  
նակների, ստորադասական հղանակի (1-ին ապառնու) բոլոր ա-  
ռաջին և երկրորդ դեմքերի և հրամայականի հոգնակիները: Այդ  
հոգնակի մասնիկը կա նաև կովկասյան լեզուներում: Աբխազերե-  
նում այդ մասնիկը՝ ա) անորոշ անձերի (ինչպես ֆր. on, կամ  
գերմաներեն man) հոգնակին է կազմում. օրինակ՝ i ka-q-our (են,  
суть), bzia-q-our (լավ են, хороший суть) և այլն, բ) անցո-  
ղական բայերի ուղիղ խնդրի հոգնակին է կազմում. օրինակ՝  
ik'astueyt (անում եմ, делаю), ik'asta-q-ueyt (շատ բան  
եմ անում), գ) դրվում է այն բառերին, որոնք ցույց են տալիս  
անճան էական: Սվաներենում այդ հոգնակի մասնիկը պահպան-

<sup>1</sup> Գովե աման, կովե ամանեղեն. հավանաբար կազ ունի հայերեն «խե-  
քի» բառի հետ: Տես Հ. Աճառյան, «Արմատական բառարան»:

ված է բայերի երրորդ դեմքում, այդ մասնիկը պահպանված է նաև հարեթական շատ այլ լեզուներում:

Հայերենի Յ հոգնակի մասնիկը, որը սեռական, տրական և բացառական հոլովների հոգնակիներն է կազմում, պահպանված է արևադերեկում որպես բանական էականեր արտահայտող բառերի հոգնակի մասնիկը. օրինակ՝ azh (կնյազ), aah-<sup>ժ</sup>az (կնյազներ), azəza (առաջնորդ), azəza-<sup>ժ</sup>az (առաջնորդներ), որպես անցողական բայերի խնդրի (օբեկտի) հոգնակի մասնիկը. ինչպես՝ sfueyt (ես ատում եմ), isia-<sup>ժ</sup>-ueyt (ես շատ եմ ատում) և այլն: Այդ մասնիկը հանդես է գալիս նաև դերանունների հոգնակիներում Յ տարբերակով, օրինակ՝ har<sup>ժ</sup> (մենք, мы), ur-<sup>ժ</sup> (ներանք, они) և այլն:

Հայերենում այդ հոգնակի մասնիկը, ինչպես նշվեց վերևում, կազմում է թեք հոլովների հոգնակին. այդպիսի ֆունկցիա ունի նույն հոգնակին նաև բարձրակարգ լեզուներում, բայց արևադերեկում այն միայն բանական էակաների անունների հոգնակին է կազմում. այդ երևույթը, ինչպես նշել է Մաուր, ցույց է տալիս, որ նախնական շրջանում այդ վերջածանցը գործածվել է միայն որոշ առարկաների հոգնակին կազմելու համար, և միայն հետագայում է, որ նա սկսել է տարածվել և գործածվել բոլոր անունների թեք հոլովների համար:

Հայերեն եր, եաւ հոգնակի մասնիկների հետքերը նույնպես պահպանված են արևադերեկում, սվաներենում և կովկասյան այլ լեզուներում: Նրանք հին հայերենում տարածված չեն եղել, դրանցով միայն մի քանի բառերի հոգնակին է կազմվել (իշխար, վանեար, որեար և այլն): Բայց միջին հայերենում սկսվում են լայն գործածություն ստանալ, որովհետև բարբառների իրողությունները անարգել մուտք են գործում գրավոր լեզվի մեջ: Այդ փաստերից երևում է, որ գրաբար լեզվի մշակման ընթացքում այդ վերջածանցները կամաց-կամաց դուրս են մղված եղել գրական լեզվից և փոխարինվել են Բ և Յ հոգնակի մասնիկներով, որոնք, ըստ երևույթին, եղել են հայ էթնիկական միություն և պետական իշխանության մեջ վճռական դեր խաղացած ցեղերի լեզուների հոգնակի մասնիկները:

Հայերենում բայերի բոլոր ժամանակների երրորդ դեմքերի հոգնակին կազմվում է Ն մասնիկով: Այդ հոգնակի մասնիկը, մեր կարծիքով կապվում է նի—ոճ վերջածանցի հետ, որից կազմվում է նաև ժամանակակից հայերենի, ինչպես նաև բարբառների

գոյականների հոգնակի վերջածանց ներ-ը (նի+եար): Այդ հոգնակի մասնիկը հայերենից անցել է կովկասյան լեզուներին և պահպանվել է մի շարք տեղերում. ինչպես՝ Ager-ն «Միգրելիա և միգրելներ», Աֆշ-ն «Աբխազիա և աբխազներ»: Նոր վրացերենում այդ մասնիկը փոխարինվել է eb (ցծ) բառնիկով, բայց պահպանված է հին վրացերենի գերանուններում և հապավված ձևով՝ նաև որոշ անուններում:

Մեր լեզվում, առանձնապես աշխարհաբարում և բարբառներում կան հնդեվրոպական լեզվասիստեմին խորթ հոգնակիների կուտակումներ և կցականություն: Մեր բարբառներում, օրինակի համար, շատ սովորական են տն-եր-ում-ս, տն-եր-նի-ս բարդությունները, որոնց մեջ նի-ն անձի, իսկ եր (ներ) իրի հոգնակիություն են ցույց տալիս: Գրաբարում նույնպես մենք հանդիպում ենք հոգնակիների այնպիսի կուտակումների, օրինակ՝ իրավ-ունե բառում կան երկու հոգնակի մասնիկ, բայց այդ բառը նորից ենք հոգնակի դարձնում. դեղ-որ-այք, արտ-որ-այք, վան-որ-այք բառերի մեջ կան երկուական հոգնակի մասնիկներ և այլն: Հոգնակիների այս կուտակումները ցույց են տալիս, որ հայերեն այդ բառերը լեզվական մի քանի տարբեր միջավայրերով են անցել մինչև հասել են իմաստային տեսակետից համեմատաբար ավելի կայուն շրջանի:

Հայերենի բարբառների հոլովական սիստեմը համարյա ամբողջությամբ, իսկ գրաբարինը՝ մեծ չափով, տարբերվում են հնդեվրոպական լեզուների հոլովական սիստեմից: Հայերենի բարբառների և ժամանակակից հայոց գրական լեզվի գոյական անունների գերակշռող մեծամասնությունը ի հոլովման է ենթարկվում, իսկ ի հոլովակազմիչը, որպես սեռական հոլովի տարբերիչ մորֆեմա, եղել է ուրարտերենում<sup>1</sup> և բնիկ այլ ցեղերի ու ժողովուրդների լեզուներում:

Հարեթական որոշ լեզուներում ձայնավորներից հետո ի-ն թուլանում և դառնում է Յ. իսկ հիթե գրան նախորդում է Ա. ձայնավորը, վերածվում է Ծ-ի: Այդ երևույթը նկատելի է և հայերենում: Հին հայերենի Ի-Ա խառն հոլովումը (կամ թույլ Ա հոլովումը) բացատրվում է նրանով, որ այդ հոլովման ենթարկվող բառերի Ա-ն Յ-ի ազդեցության տակ դառնում է Ծ և բացառական հոլովում միանալով Յ-հոլովական վերջավորությանը՝ վերածվում է Է-ի. իսկ սեռական և տրական հոլովների Ծ-ն ժողովրդական

<sup>1</sup> Տես. Դ. Ղափանցյան, «Ուրարտուի պատմությունը» 1940 թ., նրևան:

լեզվի ազդեցությամբ փոխվում է Ի-ի: Գործիական հոլովում պահվում է Ա-ն, որովհետև գործիականի հոլովակազմիչ Ի-ն է (մեծ, մեծի, ղմեծ, ի մեծէ, մեծաւ և այլն):

Հայոց նոր լեզուներում շատ տարածված են դերանվանական մասնիկները որպես ստացական և ցուցական հոդեր, իսկ գրաբարում նաև որպես անձնական դերանունները նախադասության մեջ փոխարինող մասնիկներ. օրինակ՝ «եղբայրս եկավ», «օրերս սկսվելու են քննությունները», «զոր շարժին և փոփոխի չէ էական», «զոր գրեցերդ...» և այլն: Այդ երևույթը կա նաև խեթերենում և կովկասյան լեզուներում: Աբխազերենում պահպանված է ստացական դերանվանական մասնիկների նման գործածությունը. առաջին դեմքի համար գործածվում է Ս, երկրորդ դեմքի համար՝ Ի, իգականի դեպքում՝ Բ, երրորդ դեմքի համար Ի՝ բաղաձայններից առաջ, Յ՝ ձայնավորներից առաջ, իգականի դեպքում՝ Լ, անբանականի դեպքում՝ Ա, հոգնակիի առաջին դեմքի համար՝ Հ, երկրորդ դեմքի համար՝ Շ և երրորդ դեմքի համար՝ Բ: Այս երևույթը հնդեվրոպական լեզուներին հատուկ չէ:

Հաբեթական մի շարք լեզուներում շատ տարածված է հետադրությունների գործածությունը: Դրանք երբեմն հոլովական հարաբերություններ են ցույց տալիս. օրինակ՝ աբխազերենում կոռ կամ կոռ (մոտ) հետադրությունները գործածվում են սեռական հոլովի հետ. օրինակ՝ sab i-knə «իմ հոր մոտ», samə i-knə «իմ եղբոր մոտ, դեպի իմ եղբայրը» և այլն:<sup>1</sup> Այդ երևույթը նկատվում է նաև մեր հին ու նոր լեզուներում, միայն այն տարբերությամբ, որ ժամանակակից հայերենում մեծ մասամբ գործածվում են հետադրություններ, իսկ գրաբարում՝ նախադրություններ (նախդիրներ): Սակայն գրաբարի մեջ նույնպես պահպանված են զանազան հետադրությունների մնացորդներ, որոնք գործածվել են և՛ որպես ցուցական դերանուններ և՛ որպես հոլովական հարաբերություններ ցույց տվող բառեր. օրինակ՝ աստ, անդ, աստի, անտի, այստ, այդտ, անդր և այլն (ի քաղաքի աստ, ի քաղաքէ աստի, ի քաղաքէ անտի, ի քաղաք անդր և այլն): Գրաբարում կա նաև հանդերձ հետադրությունը, որն իր կիրառությամբ և իմաստով նման է հաբեթական լեզուների հետադրություններին:

Հայոց լեզվի բառաստեղծական և թեքական մասնիկները, որոնց մի քանիսի մասին խոսեցինք վերևում, բարդ, բազումս խա-

<sup>1</sup> Н. Я. Марр, „О языке и истории абхазов“ стр. 18.

չավորված պատկեր են ներկայացնում: Բառաստեղծական մասնիկներից հնդեվրոպական են համարվում մե վերջավորությունը (ուումն, սերմն, հիմն), ունդ, ինդ, անդ, ուստ, եստ, իւն, ուքիւն, աւր ածանցները<sup>1</sup> (ծնունդ, սնունդ, փոխիւնդ, արգանդ, հագուստ, վերուստ, զգեստ, արվեստ, հանգիստ, ելոյթ, լուսաւոր), թեև նրանցից որոշ մասը իր կաղմութեամբ ու ձևով կապվում է միայն հայոց լեզվի հետագա օրինաչափությունների հետ և հայկական էթնիկական լեզվի կազմավորման մեջ էական դեր չի կատարել: Ումն, ուստ, մն, մասնիկները կան նաև խեթերենում,<sup>2</sup> սեմական լեզուներում և, եթե նույնիսկ հնդեվրոպական լինեն, մեր լեզվին են անցել բնիկ լեզուների միջոցով որպես բնիկ տարրեր: Հայերենում պահպանված են հնդեվրոպական բառակազմական այլ մասնիկներ, որոնք շատ քիչ բառերում են դործածվում և որակական որևէ նշանակություն չեն կարող ունենալ մեր լեզվի համար: օրինակ՝ Ան («վրան», «վրայով») մասնիկը, որն օգտագործվում է միայն մի քանի բառերում (անբահի, անթեղել, անձեռոցիկ, անկողին և այլն), որոնք այժմ արդեն որպես ածանցյալ բառ չեն գիտակցվում, որովհետև ան ածանցը, վրան, վրայով նշանակությամբ կենդանի չէ և որպես քարացած ձև պահպանվում է հիշված բառերում շատ հին ժամանակներից սկսած:

Հին հայերենի հոգնակի հայցականի Ս և եզակի Բ հոլովակազմիչները միայն կապվում են հնդեվրոպական լեզվասխտեմի հետ:

Խոնարհման մեջ հնդեվրոպական են համարվում «Մ», «Ս», «Յ» մասնիկները (աղամ, աղաս, աղայ), հոգնակի երրորդ դեմքի «ն» մասնիկը. անցյալ կատարյալի և ապառնիի «Յ»-ն (գնացի, գնացից) անորոշ և անցյալ դերբայների «Լ» վերջավորությունը (հեղուլ, հեղեալ, սիրել, սիրեցեալ), ապառնի հրամայականի «Ջ»-ն (տեսչիր, ջիթ), ներկայի բնի «ան», «ն», «նչ», «Չ» ձևերը (տեսնեմ, յառնեմ, թաքչիմ, երկնչիմ), անցյալ կատարյալի «ն» հավելումը (եսպան, եդ): Սակայն այս մասնիկների որոշ մասի հնդեվրոպական լինելը կասկածանքի տակ պետք է առնել, որովհետև դրանցից մի մասը ավելի շուտ կապվում է բնիկ, քան հնդեվրոպական լեզուների հետ. օրինակի համար, երրորդ դեմքի

<sup>1</sup> Գ. Դափաճյան, «Հայերի և հայերենի գոյացման շուրջը» Մ. Գրականություն, 1941 թ. № 1:

<sup>2</sup> Տե՛ս Գ. Կապանյան, «Хетские боги у армян», Госунт, 1940 г. Ереван.

«ն» հողնակի մասնիկը կա նաև հարեթական լեզուներում: Ճանե-  
րենում երրորդ դեմքի հողնակին միշտ «ն» է լինում. ինչպես՝  
ճշարտ (գրում եմ), ջարտ (գրում ես), յարտ-ն (գրում է),  
ճշարտոտ (գրում ենք) ճշարտոտ (գրում եք), յարտ-ն-ն  
(գրում են) և այլն: (նշ), «Չ» մասնիկները, ինչպես նաև անցյալի  
և ապառնիի «Յ» վերջավորությունը, իրենց համարժեքներն ունեն  
կովկասյան լեզուներում և իրենց ձևով էլ ավելի շատ բնիկ ժողո-  
վուրդների, քան հնդեվրոպական լեզուների կոլորիտ ունեն: Հայե-  
րենի խոնարհման և հոլովական սիստեմը, ընդհանուր առմամբ  
մոտ է բնիկ ժողովուրդների լեզուների հոլովման և խոնարհման  
սիստեմին, որովհետև այն, ի հակադրություն հնդեվրոպական լե-  
զուների, ավելի մոտենում է կցական, քան թեքական տիպի լեզու-  
ների թեքման սիստեմներին:

Ինչ վերաբերում է բառակազմական և բառահարաբերական  
մասնիկներին, ապա այստեղ նույնպես հայերենին յուրահատուկ  
ու բնիկ տարրը գերակշռում է:

Հայերենի բառակազմական մասնիկների մի մասը առաջա-  
ցել է հետագայում, այն ժամանակ, երբ հայերենը արդեն կազ-  
մավորված լեզու էր: Այդ մասնիկների գերակշռող մեծամասնու-  
թյունը ձևավորվել է հայերենի զարգացման օրենքների համապա-  
տասխան, գործածվել է զրական լեզվում և ապա, եթե կենսունակ  
է եղել, անցել է նաև ժողովրդական լեզուներին՝ բարբառներին:  
Այդպիսի մասնիկների փայլուն օրինակը կարող են լինել հունա-  
բան դպրոցի ներկայացուցիչների ստեղծած մասնիկները, որոնց  
մեծ մասը կազմված են հայերեն բառերից, սակայն հունարենի  
հետևությունաբ, ինչպես՝ առտ, ած, ներ, ստոր, շար, պար, դեր,  
թեր և այլն, որոնք որպես ինքնուրույն արմատներ այժմ էլ գոր-  
ծածվում են մեր լեզվում: Հունաբան դպրոցի ներկայացուցիչների  
ծառայություններից ամենամեծը, մեր կարծիքով, հենց այդ մաս-  
նիկների կազմելն ու դրանցով տերմիններ ստեղծելն էր: Այս  
մասնիկները մտան գրաբարի մեջ և անցան մեր բարբառներին ու  
ժամանակակից հայերենին միայն այն բանի շնորհիվ, որ դրանք  
առաջին հերթին կապվում էին հայերենի հետ, կազմված էին  
հայկական բառերից և հարազատ էին: Իսկ այն նորմոտություն-  
ները, որոնք կապված չէին հայերենի հետ և հունաբան դպրոցի  
ներկայացուցիչներն ուղղում էին արհեստական ճանապարհով  
խցկել մեր լեզվում, չմասնայականացան և մոռացության մատ-  
նըվեցին: Այս և նման այլ մասնիկներ կարող են քննվել լուրջ ուր-

պես հետագայում առաջացած մասնիկներ, որոնք միայն որոշ շա-  
փով կարող են լուսաբանել հայերենի զարգացման ընթացքը և  
ազդեցություն հարցը և ոչ թե հայերենի կազմավորման խնդիրը:

Հին հայերենում այդպիսի մասնիկներից բացի գործածվել են  
մի շարք այլ մասնիկներ, որոնցից առավել տարածված ածանցներ  
են եղել՝ ալան, ալի, անի, գույն, եղեն, անք (անուններում),  
կին (անձներական թվական, անգամ), եալ եալ (եկ), եան, իւն,  
նոց, անոց, ոց, ող, ոտի, օրեն, ուրիւն, իչ աւօր, ունդ, ուրդ (մի  
քանի տարածված բառերում), ուստ, եստ, իստ, ունիք, ունի, (տե-  
ղանուններում և ազգանուններում), ունք, ումն, ան և այլն: Նշված  
վերջածանցներից հնդեվրոպական լեզուների հետ են կապվում՝  
իւն, ուրիւն, ոչ, ան («վրա, վրայով» իմաստով), ան (բացասա-  
կան) ածանցները. խեթերենի հետ ընդհանուր են՝ ուրդ, ումն,  
ուստ վերջածանցները,<sup>1</sup> հաբեթական լեզուների հետ ընդհանուր  
են՝ եղ, եղեն, ենի, ունի, անի, իչ մասնիկները, իսկ մնացածների  
գերակշռող մեծամասնությունը կարելի է ստուգաբանել միայն  
հայերենի օգնությամբ: Օրինակ՝ աւօր, աւօր վերջածանցը, որը  
սխալմամբ համարվել է պարսկական վերջածանց, առաջացել է  
հայերենի հնչյունական օրենքների համապատասխան՝ նախագրա-  
բարյան շրջանում բեր բառի մի երկրորդ՝ բօր ձևից, որի Բ հըն-  
չյունը երկու ձայնավորի մեջ դարձել է Վ:<sup>2</sup> Այսպիսով, մեր լեզ-  
վի բառակազմական և բառահարաբերական մասնիկների միայն  
չնչին մասն է կապվում հնդեվրոպական լեզուների հետ:

Հնդեվրոպական լեզուների ստուգաբանությունները շատ հա-  
ճախ բռնազբոսիկ և անհավանական են. օրինակ՝ գրաբարի հոգ-  
նակի Գ մասնիկը նրանցից ոմանք համարել են դրավիդյան լե-  
զուներից սերված:<sup>3</sup>

Հայոց լեզվի հնդեվրոպական շերտը թույլ ու համեմատաբար  
աննշան դեր է խաղացել մեր լեզվի կազմավորման մեջ, որովհե-  
տե նրա մեծ մասը կամ ձևավորվել է պատմականորեն ավելի  
ուշ շրջանում, կամ մեր լեզվին է անցել հնդեվրոպական ազդեցու-  
թյանը ենթարկված բնիկ ժողովուրդների լեզուների միջոցով և  
ոչ անմիջականորեն: Նշված փաստերը ցույց են տալիս նաև այն,  
որ կովկասյան ժամանակակից մի շարք լեզուներ (վրացերենը,

<sup>1</sup> Г. Капанцян, Хетские боги у армян. 1940 г.

<sup>2</sup> Մ. Արեղյան, «Հայոց լեզվի տեսություն», էջ 231, 1931 թ., նրան:

<sup>3</sup> See A comparative grammar of the Dravidian or Sout-Indian family of languages, by the Rt. Rev. Robert Caldwell.

ճաներենը և այլն) հայերենի հետ ունեցել են իրենց նախորդները Հայկական բարձրամանդակում և Կովկասում ու ժառանգել են այդ նախորդների հարուստ կուլտուրան և լեզուներից շատ իրողություններ, որոնք վերապրուկների ձևով պահպանված են նրանց լեզուների ու կուլտուրական մշակույթների մեջ:

3.

Հայերի և հայերենի կապը հնդեվրոպական ժողովուրդների ու լեզուների հետ ծագումնաբանական չէ և ոչ էլ արենակցական. նրանց կապը առաջացել է տնտեսական և սոցիալական այն սերտ շփման պայմաններում, որոնք ստեղծվել են այդ ժողովուրդների մեջ իրենց զարգացման ավելի ուշ շրջանում, երբ հայ ժողովուրդը, որպես էթնիկական առանձին խմբավորում և հայոց լեզուն, որպես ինքնուրույն լեզու արդեն կազմավորված էին:

Հայոց լեզվի բառապաշարը այդ տեսակետը հաստատելու համար հսկայական նյութ կարող է մատակարարել, որովհետև նրա մեջ արտացոլել են այն տեղաշարժները, որոնք կատարվել են հայ ժողովրդի կյանքում իր պատմության տարբեր էտապներում: Երբ հայերը հունական իշխանության տակ, կամ հույների հետ սերտ հարաբերությունների մեջ են եղել, հունական լեզվից փոխ են առել շատ բառեր. երբ պարսիկների, ասորիների, կամ այլ ժողովուրդների հետ են շփվել, ապա այդ ժողովուրդներին լեզուներից են փոխ առել դանազան բառեր: Սակայն այս բոլոր դեպքերում էլ հայկական կուլտուրան և հայոց լեզուն պահպանել են իրենց ինքնուրույնությունը, չեն կորցրել իրենց էթնիկական ու լեզվական առանձնահատկությունները և որոշ դեպքում խորը կերպով փոխադրել են իշխող, կամ նվաճող ցեղի լեզվի ու կուլտուրայի վրա, օժանդակել նրանց զարգացմանը:

Ուշագրավ է ակադեմիկոս Մառի դիտողությունը հայոց լեզվի ու կուլտուրայի այդ առանձնահատկության մասին. նա պատմ է, որ հայկական ազդեցությունը նկատելի է ոչ միայն Փոքր Ասիայի սելջուկների արվեստի, այլև դրանից առաջ նաև բյուզանդական և առանձնապես հին ռուսական ճարտարապետության վրա, համենայն դեպս հայերն ու ռուսները միասին ժառանգել են նախապատմական միևնույն էպոխայի գեղարվեստական ճաշակը: Այն, ինչ որ Արևմուտքում արել են իսպանացիները և իռլանդացիներ-

բը,— շարունակում է Մառը,— նույնը արել են հայերը և իրենց հարևան ասորիները Արևելքում՝ հարստացնելով հելենիզմը, ինչպես իրանական, այնպես էլ մարդկային կուլտուրայի զուտ ցեղական մշակույթի էլեմենտներով։ Այդ ազգերը, հաբեթիզմի ուժեղ կնիք կրող շորս երկրների այդ բնակիչները, շրջապատելով Եվրոպայի հին կուլտուրայի միջավայրը, պահպանել են այդ կուլտուրայի տրագիցիաները և ապահովել մարդկության նոր առաքնությամբ, իրենց վրա վերցնելով միջնադարյան խավարամիտ բարբարոսության ու դեսպոտիզմի ծանրության շտկումը։ Արևելյան թշնամիներից առավել ծանրաբեռնված ասորիները իրենց կուլտուրայի միսիային զուգ դարձան, անհետացան, ձուլվեցին արաբներին։ Իսկ հայերը շարունակեցին իրենց կրթիչ դերը՝ ազնվացնելով ստրկացնողների ցեղական տիպը իրենց արյունով և արգասավորելով նրանց հասարակական կյանքը իրենց ստեղծագործող ձեռքերով։<sup>1</sup>

Լեզուները և կուլտուրաները ոչ թե մի, այլ բազմաթիվ ակունքներից են սկզբնավորվում, նրանք գոյանում են տարբեր ցեղերի լեզուների և կուլտուրաների խաչավորումից, միացումներից ու միաձուլումներից։ Եվ որքան որ խաչավորված կամ ազդեցությունների ենթարկված լինի այս կամ այն լեզուն, այնքան այն զարգացած ու կատարելագործված կարող է լինել, միևնույն ժամանակ այնքան հեռացած յուր սկզբնաղբյուրներից։ Հայոց լեզվի բառապաշարը վերին աստիճանի հետաքրքրական փաստեր կարող է տալ այդ մասին։ Հայոց լեզվի բառապաշարի այն մասը, որը գրի է անցկացված մեր էրայի 5-րդ դարից 12-րդ դարը ընկած շրջանում, մոտավորապես 11 հազար արմատից է կազմված։ Այդ արմատներից, ըստ Հ. Աճառյանի ստուգաբանության, 713-ը հնդեվրոպական են, 4000-ը՝ փոխառյալ, 151-ը՝ բնաձայն և 5572-ը՝ անծանոթ բառեր։ Ինչպես ցույց են տալիս այս հաշվումները, այն բառերը, որոնք հայերենը կապում են հնդեվրոպական լեզուների հետ, մեր ընդհանուր բառապաշարի տասը տոկոսն էլ չեն կազմում։

Ուրեմն հայերենի բառապաշարի հիմնական մասը բնիկ ժողովուրդների և հայերին հարևան ժողովուրդների լեզուների հետ է կապվում. այդ նշանակում է, որ հայոց լեզվի շինարարությունը ձգել է նաև այն ժողովուրդների լեզուների շինարարությունը,

<sup>1</sup> Язык и история, 1936 г. ст. Магга, стр. 72—73.

որոնք կուլտուրական սերտ կապ են ունեցել հայերի հետ: «Հայերը առաջիններն էին,— ասում է Մառը,— որ դեռևս միջին դարերում գիտակցեցին միջազգայնականության շահերը և ընդհանուր պաշտմության ըմբռնումները: Հայերի միջազգային շինարարական դերը չի թուլանում նույնիսկ այն ժամանակ, երբ օտար ճնշողները ստիպում էին հայերին նրանց համար աշխատել: Քաղաքական և տնտեսական իրադարձությունները քշում էին հայերին տեղից-տեղ, երկրից-երկիր, և գեղարվեստական ու գրական զարմանալի ձիրքերով օժտված այդ ժողովուրդը իր հետ տարածում էր վարպետություն, գեղարվեստական ճաշակ և օժանդակում տեղական մշակույթների զարգացմանը: Հայկական ժողովրդական գրքերը իրենց տեսակի մեջ առաջիններն էին, որոնք ներգործեցին տարբեր ազգերի հսկայական շերտերի միմյանց մերձեցնելու վրա՝ սկսած Միջագետքի, Ասորիքի բնակիչ արաբներից մինչև Կովկասյան լեռների բնակիչները: Հայկական գեղեցիկ շինարարությունը նույնիսկ Անիի անկումից հետո էլ անհետ չոչնչացավ, այլ նոր թափով հին Հայաստանում վերականգնվեցին քանդված տաճարներն ու գեղեցիկ պալատները, ստեղծեցին գեղեցիկ արվեստի գոհարներ, նաև՝ ճարտարապետական շքեղ կառուցումներին ներդաշնակող հրաշալի երաժշտություն ու արվեստը»<sup>1</sup>

Հայոց լեզուն պահել է իր ինքնուրույնությունը ոչ միայն հայ հեղինակների գրվածքներում, այլ նույնիսկ թարգմանություններում: Բավական է միայն վերցնել Աստվածաշնչի հայերեն թարգմանությունը և համեմատել այն այլ ժողովուրդների թարգմանությունների հետ: Հայերեն Աստվածաշունչը հայոց հին լեզվի գանձարանն է. նրանում պահպանված են լեզվական այնպիսի գեղեցիկ կտորներ, որոնք վիայում են հայերենի զարգացած, բարձր աստիճանի հասած լինելու մասին: Աստվածաշնչի թարգմանությունը,— ինչպես նշել է ակադ. Մառը,— միևնույն ժամանակ հայ ժողովրդի հեթանոսական շրջանի սովորությունների մնացորդների հարուստ գանձարանն է: Հայ ժողովրդական իմաստալից դարձվածքներն ու ոճերը անկաշկանդ կիրառվել ու գործածվել են Աստվածաշնչի գրաբար թարգմանության մեջ, այդ հանգամանքը հայերեն թարգմանությունը միանգամայն ինքնուրույն ու ինքնատիպ է դարձնում:<sup>2</sup>

Հայոց լեզուն զարգացման այդպիսի բարձր աստիճանի վրա

<sup>1</sup> Язык и история т. I, стр. 68—69, 1936 г.

<sup>2</sup> Ն. Մ ա ռ, նույն տեղ. էջ 70:

էր կանգնած մեր էրայի 5-րդ դարում, որովհետեւ նա իր պատմության ընթացքում արդեն բազմաթիվ անգամ խաչավորվել, մշակվել ու իր մեջ էր ընդունել ու յուրացրել լեզվական շատ այլ իրողություններ: Հայոց լեզուն նույնիսկ հնդեվրոպական լեզուների հետ խառնվելու ժամանակաշրջանից շատ ու շատ առաջ դարձացած ու կուլտուրական լեզու էր, մի քանի անգամ խաչավորված հաբեթական լեզուների հետ: Հայոց լեզվի բարդ կազմության մեջ, — ասում է Ն. Մառը, — միաձուլվել են ոչ թե երկու, այլ մի քանի, հնդից ոչ պակաս հաբեթական ցեղերի լեզուները: Ահա թե ինչու հայոց լեզվում, անկախ հնդեվրոպական շերտից, մենք տեսնում ենք բառերի և ձևերի ապշեցուցիչ հարստություն: Հաբեթական տարբեր ցեղերի լեզուներից յուրացնելով միևնույն նշանակություն ունեցող զանազան բառեր, հայ ժողովուրդը դրանց մեջ դրել է այլ, երբեմն էլ բավականաչափ մոտ իմաստներ: Հաբեթական տարբեր ցեղերի լեզուներում, օրինակի համար, եղել են անձն, հոգի և շունչ բառերը, որոնք գործածվել են միայն հոգի առումով: Մինչդեռ հայերենում դրանցից յուրաքանչյուրը հատուկ իմաստ ու գործածություն է ստացել: Այդ բազմազանությունը մենք տեսնում ենք նաև բառակազմական և բառահարաբերական ձևերի մեջ, որոնց մասին խոսեցինք վերևում: Նույնը տեսնում ենք նաև դերանուններում. օրինակ՝ անձնական դերանունների ինձ, քեզ, մեզ, ձեզ բառերի մեջ Զ հնչյունը տեղադնիլ լեզուներից հայերենին անցած հոլովական (տրական) վերջավորություն է, իսկ Զ-ն այդ Զ հնչյունի բարձր աստիճանն է: Այդպիսի փոխանցում նկատելի է նաև մեզրելներենում ու ճաներենում: Հնչյունական այդ երևույթը, ինչպես նկատել է ակադեմիկոս Գր. Ղափանցյանը, կա նաև խեթերենում<sup>1</sup> և եզվական այս իրողությունները ցույց են տալիս, որ հայերենը իր մեջ ձուլել է տարբեր լեզուների տարրերը և իր բարդ կազմով առաջին հերթին առնչակցվում է նախապատմական շրջանի հաբեթական ցեղերի ու նրանց լեզուների հետ:

Համեմատական լեզվաբանության խոշորագույն ներկայացուցիչները նույնպես չեն ժխտում մի շարք առանձնահատկություններ, որոնք սահմանադատում են հայերենը հնդեվրոպական լեզուներից: Այդ առանձնահատկություններից առաջինն այն է, որ ռեալմաթիվ սովորական բառեր, որոնք ընդհանուր են բոլոր

<sup>1</sup> Гр. К а п а н ц я н, „Хеттские боги у армян“, стр. 21, 1940 г.

հնդեվրոպական լեզուների մեջ, չեն պահված հայերենում,<sup>1</sup> օրինակ՝ գիշեր, արեգակ, խոզ, այժմ, որդի, հարյուր, նուրբ, բարակ, բի, բիավարել, վարել, հշել, բել մանել, հյուսել, բարախ կապել, փռել, փարածել, հետեւել և այլն:

Ահադեմիկոս Ն. Մառը գտնում է, որ հարեթական ծագում ունեն հայերեն այնպիսի սովորական բառեր, ինչպիսիք են՝ գարի\*, ցորեն, հաց, զինի, այգի\*, եզն\*, ցուլ, ձի, ջորի\*, շուն\*, ոսկի, արծաթ\*, պղինձ, երկաթ, երկին, երկիր, բրոնզ և այլն: Պտղատու և վայրի ծառերի, ինչպես նաև բույսերի բազմաթիվ անունները բնիկ են, կամ հարևան ժողովուրդների լեզուներից փոխ առնված: Այնպիսի պտուղների անունները, ինչպիսիք են՝ խնձոր, տաճ, բնկույզ, նուտ, բուզ, սալոր, շլոր, դեղձ, խաղող, ծիրան, ձմերուկ, սեխ, սիճն և այլն, ոչ մի կապ չունեն հնդեվրոպական լեզուների հետ:

Հայերեն ծիրանի, բզնի, ձիթենի, բնկուզենի բառերի մեջ ունենք ան-են մասնիկները, որոնք կան նաև վրացերենում (օրինակ՝ ցլճոցնո kur-d-en-i «խաղող» ծճոցնո-birdan-i «խոտի անուն») և հարեթական այլ լեզուներում: Վրացերեն ցլճոցնո «խաղող» բառի կազմությունը շատ նման է հայերեն խնձորենի, բզենի, ձիթենի, բնկուզենի բառերի կազմությանը, որովհետեւ ինչպես վրացերեն, նույնպես և հայերեն այդ բառերի մեջ պահպանված է նախապատմական շրջանի հոգնակի են մասնիկը, որն աղերսակցվում է այն բնիկ ժողովուրդների լեզուների հետ, որոնք հայերենի և վրացերենի կազմավորման մեջ զգալի մասնակցություն են ունեցել:

Հայերեն «ծառ» բառը պահպանված է ինչպես խաղերենում, սումերենում նույնպես և կովկասյան լեզուներում. հին վրացերենում այդ բառը կա del ձևով, որը նշանակել է «ծառ», իսկ նոր վրացերենում նշանակում է «գերան», մեղլերենում և ճաներենում պահպանվել է այդ բառը ջա < ջալ ձևով, հոգնակիում ջալ—  
 «+փ», ջալ-e+փ, ջար-ի փոխարեն, որը պահպանված է ջար-dwal «կտրվածք կտր գերաններից» բարդության մեջ, ուր rgwal, resp. gwal նշանակում է «կտր»:<sup>2</sup>

Կովկասյան լեզուներում տան և նրա կառուցման հետ կապ-

<sup>1</sup> Հ. Աճառյան, «Հայոց լեզվի պատմություն», էջ 80, 1940 թ.

\* Հ. Աճառյանը հնդկարոպական է համարում այդ բառերը:

<sup>2</sup> И. В. Мегрелидзе, «Лазский и мегрельский слог в грузинском», стр. 106—107, 1938 г.

ված մի շարք տերմիններ աղերսակցվում են այն ծառերի անունների հետ, որոնք օգտագործվում են տների կառուցումների համար: Այդ երևույթը մեր կարծիքով, պահպանված է նաև հայերենում: Հայերեն ձեզուն բառի, որը նշանակում է «առաստաղ», «առիք» և վրացերեն ძლი-ი (յառ) բառի կապը ակնհայտ է. նրանք ունեն միևնույն բառարմատը: Այդ բառի հետ աղերսակցվում է նաև լազերեն ძეღა բառը, որը նշանակում է «տան գերանների վրա փռված հյուսվածքը», «խսիր»:

#### 4.

Բազմավաստակ գիտնական Ն. Յա. Մառը ընդլայնեց հայագիտության շրջանակները և պարզեց, որ հնդեվրոպական ու հայոց լեզուների միջև նկատված հնչյունական, բառապաշարային ու ձևական ընդհանրությունների նման ընդհանրություններ՝ ավելի հիմնավոր ու բազմազան դրսևորումներով, նկատվում են նաև հայոց և կովկասյան լեզուների միջև:

Պրոֆ. գոկտոր Գ. Ղափանցյանը օգտագործելով Ն. Մառի ձեռք բերած նվաճումները, իր մի շարք ուսումնասիրություններում բացահայտեց հայ ժողովրդի գոյացման և հայոց լեզվի կազմավորման մեջ զգալի դեր խաղացած մի այլ շերտ՝ Փոքր-Ասիական շերտը: Նա ցույց տվեց, որ հայոց լեզուն իր մի շարք իրողություններով կապվում է Փոքր-Ասիական ժողովուրդների լեզուների հետ: Սակայն ոչ միայն Գ. Ղափանցյանը, այլև մի շարք այլ գիտնականներ, առանձնապես մեր պայմաններում աճած ու Մարքս-Լենինյան ուսմունքով զինված գիտնականներ, իրենց ուսումնասիրություններում զգալի պարզություններ են մտցրել հայ ժողովրդի գոյացման հարցի մեջ (Բ. Պիտրովսկի, Ա. Ղարիբջան և ուրիշներ):

Այդ ուսումնասիրությունները, որոնք հայագիտության պատմության նոր փուլի սկիզբն են դնում, անմիճեխորեն հաստատել են, որ հայ ժողովուրդը, նրա լեզուն և կուլտուրան սերտորեն կապված են Հայկական բարձրավանդակում հայերից առաջ ապրած ժողովուրդների, ուրարտացիների ու նրանց իշխանության տակ եղած այլ ցեղերի կուլտուրաների ու լեզուների հետ:

Ուրարտական պետությունը, որի նվաճումների մասին հիշա-

<sup>1</sup> Ա. Ղարիբջան, «Հայոց լեզվի պատմության ուսումնասիրության ներածություն», Երևան, 1938 թ.:

տակութիւններ կան մեր էրայից մօտ 13 դար առաջ գրված արձանագրութիւններում, կազմված է եղել մի շարք ցեղերի քաղաքական միութիւնից: Ուրարտացիների գլխավորած միութեան կազմի մեջ մտնում էր նաև Հայաս ցեղը, որը հետագայում այնքան է հզորանում, որ կարողանում է մեր էրայից մօտ 7—8 դար առաջ իշխանութեան գլուխն անցնել: Հայասների ուժեղացումն ու հաղթանակը պայմանավորված էին այդ ժամանակ Առաջավոր Ասիայում կատարված իրադարձութիւններով: Ժողովուրդների տեղաշարժների, քաղաքական ու տնտեսական մի շարք այլ իրադրութիւնների հետևանքով Փոքր Ասիայի պետութիւններից շատերը պատմական ասպարեղից դուրս են գալիս, կազմավորում են էթնիկական նոր միութիւններ, ուժեղանում և իշխող են դառնում առաջներում թույլ, բայց զարգացման կենսունակ ուժեր ունեցող շատ ցեղեր: Հայերի նախնիքները մինչ այդ, Վանի թագավորութեան մեջ մտնող այլ ժողովուրդների հետ, ենթարկվում էին ուրարտական պետութեան: Բայց երբ այդ պետութիւնը թուլանում է, հայասները (հայերը) իշխանութիւնն իրենց ձեռքը վերցնելով՝ աստիճանաբար իրենց են ենթարկում ուրարտացիների գերիշխանութեան տակ գտնված ժողովուրդներին, յուրացնում ուրարտական բարձր կուլտուրան ու լեզվական շատ իրողութիւններ և ստեղծում որակով նոր կուլտուրա, որին համապատասխան էլ ձևավորում է ցեղային լեզուներից վեր բարձրացած և որակային նոր աստիճանի հասած հայերենը:

Հայերը, սակայն, միանգամից իշխանութեան գլուխ չեն անցնում: Նրանք պատմական ասպարեղ իջնելով Վանի թագավորութեան անկումից առաջ, երկար ժամանակ պայքարել են իշխանութիւնը նվաճելու համար: Այդ պայքարը հաճախ շատ սուր բնույթ է ստացել և շարունակվել է նույնիսկ իշխանութիւնը նվաճվելուց հետո: Այդ կատաղի պայքարը, որի պրոցեսում էլ կազմավորվել է հայ ժողովուրդը, իր խոր կնիքն է դրել մեր ժողովրդի մեջ պահպանած լեզենդների, ժողովրդական էպոսի և կուլտուրական այլ մշակութային վրա: Ակադեմիկոս Հ. Մանանդյանը «Քննական տեսութիւն հայ ժողովրդի պատմութեան» կարևոր աշխատութեան 34-րդ էջում գրում է՝ «Հայի, Բելի, Արամի, Արա Գեղեցիկի, Շամիրամի և Անգեղ-Տորքի դուցազնական առասպելները, որոնք պահպանվել են Մար-Աբասից քաղված Մովսես Խորենացու պատմութեան մեջ նախաարմենական ծագում ունեն, պատկանում են մասամբ Ուրարտուի բնակչութեան կրոնա-առասպելական ավան-

գլխավորները շարքին, մասամբ էլ իրենց մեջ պահել են ազդու ու հեռավոր հիշողություններ Ուրարտուի պատմական անցյալի»:

Հուլյն մատենագիրներին այն վկայությունները, որոնցով հայերը և հայերենը կապվում են փոյուզացիների հետ, նյութական ու պատմական ոչ մի փաստով ապացուցված չէ, եթե չհաշվենք հայերենում պահպանված Աստված բառը, որը ավելի շուտ Փոքր-Ասիական կազմավորում ունի: Սակայն եթե մի քանի հարյուր բառ անգամ փոյուզերենից հայերենին անցած լինեք, դարձյալ չէ՞ր կարելի ասել, թե հայերն ու փոյուզացիները միևնույն ժողովուրդն են, կամ միևնույն ծագումն ունեն: Լեզվական իրողությունները պատմական հավաստի աղբյուր կարող են լինել միայն այն ժամանակ, երբ դրանք վերցվում են իրենց զարգացման ընդհանուր շղթայի, պատմական հաջորդականության ու փոփոխելիության մեջ:

Յուրաքանչյուր լեզվի պատմական հետազոտությունը անխուսափելիորեն պետք է կառուցվի տվյալ ժողովրդի քաղաքացիական պատմության վրա: Լեզուն կարող է կազմավորվել այն ժամանակ, երբ արդեն ձևավորվել է ժողովուրդը. լավագույն դեպքում նրա կազմավորումը ժողովրդի լինելիության զուգահեռ է լինում, երբեք, սակայն, չնախորդելով նրան: Չի կարելի ենթադրել, թե հայերենը գոյություն ունեք, երբ դեռ չկար հայ ժողովուրդը: Բայց չի կարելի բացառել նաև հայոց լեզվի մեջ եղած հնդեվրոպական լեզուների իրողությունները. յուրաքանչյուր ժողովրդի կյանքը, նրա սովելի կամ պակաս զարգացած առևտրական և կուլտուրական կապերը, հարեանների հետ հաղորդակցումը և այլն, իրենց արտացոլումն են դառնում բառերի կազմի, երբեմն էլ նույնիսկ ձևաբանական և շարահյուսական կառուցումների մեջ: Առանձին դեպքերում խառնվում են լեզուները, որի հետևանքով գոյանում է լեզվական նոր սիստեմ, կամ որակով նոր լեզու, որը հաճախ արմատապես տարբերվում է այն նախնական խոսվածքներից, որոնց հողի վրա էլ աճել է: Այսպիսով, ժողովուրդը ձևավորվելով ցեղերի խառնումից՝ վերամշակում է որակով միանգամայն նոր լեզու, ցեղային լեզուների խաչավորման հիման վրա: Նույնիսկ բարբառը արդեն ցեղային լեզու չէ, այլ լեզվական նոր վիճակ՝ ժողովրդական լեզվի կազմի մեջ:

Այս կամ այն ժողովրդի գոյացման հարցերը լուծելիս անհրաժեշտ է նկատի ունենալ նաև նրա լեզվի մատուցած փաստերը, բայց միշտ կապելով դրանք տվյալ ժողովրդի քաղաքական պատմության հետ, դիտելով այդ իրողությունները իրենց պատմական

ընթացքի մեջ, որովհետև յուրաքանչյուր լեզու իր զարգացման տարրեր շրջաններում կարող է ունենալ ներքին և լեզուների տարբեր խմբերին համեմատաբար մոտ կամ միանգամայն հակառակ օրինաչափություններ։ Սակայն այդ ընդհանուր օրինաչափությունները լեզվի զարգացման զուգընթաց փոփոխության ենթարկվելով, պատմական տարրեր շրջաններում, տարբեր ձևավորումներ են ստանում։ Ընդհանրությունները միշտ էլ կարող են լինել լեզուների մեջ և որոշ առումով դրանք նույնիսկ անխուսափելի են։ Սակայն այդ ընդհանրությունները նույնպես վերացական չեն, այլ կապված են տվյալ ժողովուրդների կյանքի ու պայքարի տարրեր շրջանների հետ։

Հնդեվրոպաբան գիտնականներից ոմանք հայ ժողովրդին հնդեվրոպական ժողովուրդների հետ են կապում՝ նկատի ունենալով հայերի արմեն հորջորջումը. նրանք ենթադրում են, թե Հոմերոսի հիշատակած արիմենե ցեղը կարելի է նույնացնել արմենների հետ և իբր թե նրանով վերջնականապես ապացուցված է հայոց լեզվի հնդեվրոպական լինելը և հայերի կապը թրակա-փուլոզիական ցեղերի հետ և այլն։ Այդ տեսակետը, սակայն, հերքվում է այլ փաստարկումներով. հայտնի է, որ արմեն բառը միայն հունական աղբյուրներում չէ, որ հիշատակվում է։ Այդ բառը պահպանված է Փոքր-Ասիական և սեմական ժողովուրդների լեզուներում։ Արմեն բառը հիշատակվում է նաև ուրարտա-խեթական արձանագրություններում, ինչպես նաև պահպանված է հայկական տեղանունների և անձնանունների մեջ։ Այդ բոլոր փաստերը, որոնց մի մասը հայտնաբերված է վերջին շրջանում, արմեն բառի հնդեվրոպական լինելու հանգամանքը կասկածանքի տակ են դնում։<sup>1</sup> Բայց եթե նույնիսկ ընդունենք, որ արմեն բառը հնդեվրոպական ծագում ունի, դարձյալ հայ ժողովրդի կազմավորման հարցը դրանով վճռված չի կարող լինել, կամ հայերը դրանով հնդեվրոպացի չեն կարող դառնալ։ Այժմ արդեն ապացուցված է, որ ցեղերի անունները մեծ մասամբ ավելի պատահաբար են հանդես գալիս, քան դիտմամբ ընտրվում։ Ռուսները գերմանացիներին նեմեց են անվանում, եվրոպական ժողովուրդները՝ գերման, իսկ գերմանացիները իրենց անվանում են դայչ։

1 Գրոֆ.-գոլտեր Ա. Ղարիբջանը իր «Հայոց լեզվի պատմության ուսումնասիրության ներածություն» աշխատության մեջ, որը լույս է տեսել 1938 թվին, արմեն բառի հնդեվրոպական լինելը ժխտում է, և կապում է այդ բառը բնիկ լեզուների հետ։

Հայ ժողովրդի հարեանները հայերին տարբեր անուններով են կոչում՝ վրացիները սոմխի, քրդերը ֆլայ և այլն։ Այդ փաստերը ցույց են տալիս, որ ժողովուրդների անվանումները կապ չունեն իրենց ծագման հետ, և ժողովուրդների գոյացման հարցը վճռելիս՝ դրանով միայն ղեկավարվելը ճիշտ չէ և պատմական փաստերի դեմ է։

Հայ ժողովրդի կազմավորումը, նրա գենեզիսը չի կարելի հասկանալ առանց հաշվի առնելու Փոքր Ասիայում կատարված տեղաշարժումները։ Փոյուդիական ինչ որ մի ցեղ կամ մի լեզվաշերտ չի կարելի նույնացնել հայ ժողովրդի և նրա լեզվի հետ։ Եթե նույնիսկ հավանական համարենք, թե փոյուդիական մի ցեղ եկել է Հայաստան, այնուամենայնիվ նա չի կարողացել վճռական դեր կատարել հայ ժողովրդի կազմավորման մեջ, որովհետև ակադ. Մանանդյանի խոսքով ասած՝ «եկվոր արմենները, կուլտուրապես ալելի ցածր մակարդակի վրա էին կանգնած, քան տեղացիները»<sup>1</sup> և չէին կարող իրենց պրիմիտիվ լեզվով ու զարգացման ցածր աստիճանով ներգործել բնիկ ցեղերի վրա և ձուլել իրենց մեջ։ Ճոհմատիրական կազմակերպություն ունեցող ցեղերը, — ասում է Էնգելսը, — պետք է գերակշռություն ձեռք բերեն հետամնացների վերաբերմամբ և սրանց էլ պետք է իրենց օրինակով, իրենց հետևից տանելին»<sup>2</sup>

Հայ ժողովուրդը կազմավորվել է մեր էրայից առաջ 8—7 դարերում, հայաս ցեղի իշխանության տակ անցած քնիկ ցեղերի խաչավորումից՝ պատմական այդ շրջանում Հայկական բարձրավանդակում ստեղծված նպաստավոր պայմանների հետևանքով. նա Արտաշեսից ու Տիգրանից առաջ արդեն ժխտել էր այն սկզբնական ցեղավտակները, որոնցից պատմականորեն ձևավորվել ու գոյացել էր։ Նա նոր ժողովուրդ էր, որ ընդունելով ու յուրացնելով Հայկական բարձրավանդակում ապրած հնագույն ժողովուրդների և հնդեվրոպական առանձին ցեղերի կուլտուրան, ու լեզվական իշխողությունները, ստեղծել էր նոր կուլտուրա ու նոր լեզու, որոնք ծագումնաբանական որոշ թելերով իրենց ցեղերի հետ կապելով հանդերձ՝ պատմականորեն միանգամայն նոր որակ էին ներկայացնում և չէին նույնանում ինչպես հնդեվրոպական, նույնպես և հաբեթական ու Փոքր-Ասիական որևէ ժողովրդի լեզվի ու կուլտու-

<sup>1</sup> Հ. Մանանդյան, «Բնական աեսություն հայ ժողովրդի պատմության», էջ 34։

<sup>2</sup> Ֆ. Էնգելս, «Ընտանիքի, մասնավոր սեփականության և պետության ծագումը», էջ 52, հայերեն։

բայի հետ: Հայոց լեզուն, ինչպես նաև հայ ժողովուրդը պատմական ասպարեզ իջնելու առաջին իսկ օրից ուրույն ու ինքնատիպ էին իրենց կազմի և բնութագրի բոլոր դրսևորումներով:

\*  
\*  
\*

Այս փաստերը իրավունք են տալիս մեզ եզրակացնելու, որ հայոց ինչպես հին լեզվի՝ դրաբարի, նույնպես և աշխարհաբարի ու բարբառների լեզվական իրողությունները, իրենց հիմնական կողմերով ձևավորվել են բնիկ ժողովուրդների լեզվական փաստերից, բնիկ երկրում: Այդ փաստերը ապացուցում են ն. Մառի կարծիքը մեր լեզվի բաղկացուցիչ տարրերի մասին, ըստ որի հայերենի առնվազն երեք տարր կազմում է բնիկ շերտը. ապա միայն մի տարր, այն էլ ավելի ուշ շրջանում առաջացած տարրը՝ հնդեվրոպական լեզվաշերտը, որը խիստ կերպով ենթարկվելով հայ ժողովրդի լեզվի ներգործությանը ամբողջապես ձուլվել ու մերվել է նրա մեջ:

Այսպիսով, անհիշելի ժամանակներից իր սկիզբը առնելով հայոց լեզուն՝ ենթարկվել է զանազան ազդեցությունների, բայց միշտ պահել է իր հիմնական առանձնահատկությունները, հաստատ կանգնած մնացել մայրենի հողի անխախտ զանգվածի վրա:

